

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒՆԻՍԻ 26-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ  
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՆԴԿԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒ-  
ԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԱՅ-ՆՆԴԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ  
ՆԵՌԱՏԱՐԱՐԴԱԿՅՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
ՆԻՄՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՆՈՒՇԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱ-  
ՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒ-  
ԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 սեպտեմբերի 2009թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.  
Գ.Նարոյությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի  
(զեկուցող), Մ. Թոփուզյանի, Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Ռ. Պապայանի,  
Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի  
2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին»  
Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 և 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2009 թվականի հունիսի  
26-ին Երևանում ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության կառավարության և  
Ննդկասրանի Նանրապետության կառավարության միջև Նայ-հնդկական տեղեկապ-  
վական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն հիմնելու  
մասին փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայաս-  
րանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը  
որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 01.09.2009թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Նանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՆՏ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանի գրավոր բացատրությունները, հեղափոխելով հուշագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Նայաստանի Նանրապետության կառավարության եւ Ննդկաստանի Նանրապետության կառավարության միջեւ Նայ-հնդկական տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն հիմնելու մասին փոխըմբռնման հուշագիրն ստորագրվել է 2009 թվականի հունիսի 26-ին Երեւանում՝ երկկողմ համագործակցությունը տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտում խորացնելու նպատակով:

2. Նուշագրով նախատեսվում է ապահովել Նայ-հնդկական տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ուսումնական կենտրոնի (Կենտրոն) հիմնումը Երեւանում, դրա հեղափոխ պահպանումն ու զարգացումը, ինչպես նաեւ գիտական աշխատողների նոր հոսքի ձեւավորում եւ աշխատատեղերի ստեղծում, համաշխարհային մակարդակի բարձրակարգ SS մասնագետների նախապատրաստում՝ հայկական շուկա ներդրումներ ներգրավելու եւ արտահանումների միջոցով շուկայի հասույթը մեծացնելու նպատակով: Այդ նպատակով Ննդկաստանի Նանրապետության կառավարության կողմից որոշում է ընդունվել փրամադրել Rs. 75.57 միլիոն գումարի միանվագ դրամաշնորհ Նայաստանի Նանրապետության կառավարությանը՝ Նայաստանի ՏՏՏ ոլորտի զարգացման համար:

3. Նուշագրով Նայաստանի Նանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- հարկացնել շենք՝ անհրաժեշտ փարածքներով, ներքին միջնապատերով, ներքին հարդարանքով, կապի միջոցներով, հոսանքով, ինչպես նաեւ հագեցած հետևյալ հարմարություններով՝ UPS/DG սարք (այլընտրանքային հոսանքի մատակարարում), ջրամատակարարում, ջեռուցում, օդափոխություն եւ այլն,

- փրամադրել համակարգիչներ եւ գրասենյակային կահույք, գրասենյակների, լսարանների, գրադարանի եւ դասախոսների աշխատասենյակների համար անհրաժեշտ այլ սարքավորումներ,

- անվճար փրամադրել կահավորված բնակարաններ, փոխադրամիջոցներ, կապ եւ բժշկական ծառայություններ Ննդկաստանից գործուղված փորձագետների համար,

- ապահովել մաքակարարված ապրանքների մաքսագերծումը եւ դրանց տեղափոխումը Կենտրոն կարճ ժամկետներում,

- տրամադրել ամենօրյա ֆինանսական եւ կառավարման աջակցություն Կենտրոնին,

- հոգալ Կենտրոնի ամենօրյա գործառնական ծախսերը,

- տրամադրել բոլոր պահանջվող թույլտվությունները եւ հաստատումները Կենտրոնի ստեղծման եւ գործունեության համար եւ այլն:

4. Նուշագրի կիրարկման նպատակով մշակված բոլոր փաստաթղթերը կլինեն հուշագրի անբաժանելի մասը:

Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից եւ գործում է անորոշ ժամկետով:

Փոխըմբռնման հուշագրի գործողությունը դադարում է Կողմերից մեկի՝ դրա գործողությունը դադարեցնելու մտադրության մասին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից վեց ամիս հետո:

5. Փոխըմբռնման հուշագրում ամրագրված դրույթները համահունչ են ՆՏ Սահմանադրության 9 հոդվածին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 72 հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2009 թվականի հունիսի 26-ին Երեւանում ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Ննդկասրանի Նանրապետության կառավարության միջեւ Նայ-հնդկական տեղեկատվական եւ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ուսումնական կենտրոն հիմնելու մասին փոխըմբռնման հուշագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

16 սեպտեմբերի 2009 թվականի  
ՍԴՈ-828